

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի՝

1) 19.9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հայտարարգվող» բառից հետո լրացնել «(բացառությամբ՝ ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև ներքին մաքսային մարմին տեղափոխելու նպատակով հայտարարագրման դեպքի)» բառերը, «4-րդ, 14-րդ եւ 15-րդ կետերի» բառերը փոխարինել «14-րդ եւ 15-րդ կետերի» բառերով.

2) 19.9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

3) 19.9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«5) մեկ ապրանքային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար, բացառությամբ սույն մասի 14-րդ եւ 15-րդ կետերի՝

ա. մինչև 3 տոննա ներառյալ բրուտտո քաշով
ապրանքների համար

բազային տուրքի 7-
ապատիկի չափով

բ. 3-ից ավելի մինչև 10 տոննա ներառյալ բրուտտո
քաշով ապրանքների համար

բազային տուրքի 13-
ապատիկի չափով

գ. 10-ից ավելի մինչև 25 տոննա ներառյալ բրուտտո
քաշով ապրանքների համար

բազային տուրքի 18-
ապատիկի չափով

դ. 25-ից ավելի մինչև 60 տոննա ներառյալ բրուտտո
քաշով ապրանքների համար

բազային տուրքի 24-
ապատիկի չափով

ե. 60 տոննայից ավելի բրուտտո քաշով ապրանքների
համար

բազային տուրքի 35-
ապատիկի չափով».

4) 32-րդ հոդվածի 11-րդ պարբերության 2-րդ կետում «եւ 4-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա մեկից: